ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2018թ. թիվ 03/26-3/7134-18 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.04.2018թ. թիվ ԴՎԱ/1241 գրության հիման վրա, 17.04.2018թ. թիվ 03/26-3/7134-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/44 ընթացակարգի շրջանակներում 20.04.2018թ. ժամը 10:30-ին և 26.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Ընկերությունը գտնվել է մոլորության մեջ և որևէ դիտավորություն չի ունեցել, այլ իրականում ընթացակարգի տեխնիկական բնութագիրը ոչ հստակ կազմված լինելով շփոթություն է առաջացրել Ընկերության մոտ, որի հետևանքով Ընկերության մասնակցությունը գնման գործընթացին դադարեցվել է:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.04.2018թ. թիվ ԴՎԱ/1241 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները համակարգի միջոցով (armeps.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել են երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման փուլում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել էր անհամապատասխանություն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առաջարկվել էր ներկայացնել համապատասխան շտկումներ: Սակայն մասնակցի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/44 ընթացակարգի շրջանակներում 20.04.2018թ. ժամը 10:30-ին և 26.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրում 26-րդ չափաբաժնի համար նախատեսվել էր 4 առանձին պոլիմերային կորպուսներով մարտկոցներ, ինչը հավանաբար շփոթություն էր առաջացրել Ընկերության մոտ, քանի որ 26-րդ չափաբաժինը և 10-րդ չափաբաժինը իրենց տեխնիկական բնութագրերով համընկնում են և միակ տարբերությունն այն է, որ 26-րդ չափաբաժնով պահանջվել է 4 առանձին պոլիմերային կորպուսներով մարտկոցներ, ինչը նշանակում է, որ մարտկոցների քանակն ավելանում է:

4. ՍՑ-ԱՄ-2018/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Էլմարկետ» ՍՊԸ-ն 3-26-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերի 10-րդ և 26-րդ չափաբաժինների համար նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

10	ալկալիական մարտկոցներ (Մարտկոցներ)	Հիմնային մարտկոցներ 5ՆԿԼԲ-70Ա/80Ա կամ համարժեք Պոլիմերային կորպուսով, 5 հատ ՆԿ-70/80Ա հաջորդաբար միացված նիկելկադիումային մարտկոցներ, առանց էլեկտրոլիտի, հավաքված մետաղապլաստիկ կորպուսում, Ունակությունը 70 կամ 80 Ահժ, աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը -40-ից+45C, Մեկ մարտկոցի նոմինալ լարումը 1.25վ, : Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:	400 հատ
26	ալկալիական մարտկոցներ (Մարտկոցներ)	Հիմնային մարտկոցներ 5ՆԿԼԲ-70Ա/80Ա, կամ համարժեք, 4 առանձին պոլիմերային կորպուսներով, յուրաքանչյուրում 5 հատ ՆԿ-70/80Ա	39 հատ

		հաջորդաբար միացված նիկելկադիումային մարտկոցներ, առանց էլեկտրոլիտի, հավաքված մետաղապլաստիկ կորպուսում, էլ. ունակությունը 70 կամ 80 ամպեր, աշխատանքային ջերմաստիճանը -40-ից+45C, Մեկ մարտկոցի նոմինալ լարումը 1.25վ, ընդհանուր լարումը 24Վ:: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:	

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 6-րդ, 18-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 03.04.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները 3-րդ, 6-րդ և 18-րդ չափաբաժինների մասով գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ

Ընկերությունից պահանջվել էր նշել պոլիմերային կարպուսների քանակը, սակայն Ընկերության կողմից դրանք չեն նշվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2018թ. կայացրած որոշմամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.04.2018թ. թիվ 03/26-3/7134-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.04.2018թ. թիվ ԴՎԱ/1241 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով

ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էլմարկետ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-26-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Միևնույն ժամանակ նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 6-րդ, 18-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի համար հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

26	Մարտկոցներ	5ՆԿԼԲ-70Ա	Հիմնային մարտկոցներ 5ՆԿԼԲ-70Ա, կամ համարժեք, պոլիմերային կորպուսով, 5 հատ ՆԿ-70Ա հաջորդաբար միացված նիկելկադիումային մարտկոցներ, առանց էլեկտրոլիտի, հավաքված մետաղապլաստիկ կորպուսում, Ունակությունը 70 Ահ, աշխատանքային ջերմաստիճանը -40-ից+45C, մեկ մարտկոցի նոմինալ լարումը 1.25վ: Արտադրման տարեթիվ 2017թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես 3-րդ (հաղորդակցման մալուխներ հատուկ կիրառման համար (Մալուխ Պ-274)) 6-րդ (սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (Հոսանքի փոխակերպիչ)) և 18-րդ

(դյուրակի համակարգիչներ (Համակարգիչ Notebook 15)) չափաբաժիններում ընդգրկված ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են արտադրման տարեթվերը: 26-րդ չափաբաժնում պոլիմերային կորպուսների քանակ նշված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 03.04.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է 6.1 հավելվածի շտկված տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները 3-րդ, 6-րդ և 18-րդ չափաբաժինների մասով գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ Ընկերությունից պահանջվել էր նշել պոլիմերային կարպուսների քանակը, սակայն Ընկերության կողմից դրանք չեն նշվել:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերով 10-րդ և 26-րդ չափաբաժինների համար նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

10	ալկալիական մարտկոցներ (Մարտկոցներ)	Հիմնային մարտկոցներ 5ՆԿԼԲ-70Ա/80Ա կամ համարժեք Պոլիմերային կորպուսով, 5 հատ ՆԿ-70/80Ա հաջորդաբար միացված նիկելկադիումային մարտկոցներ, առանց էլեկտրոլիտի, հավաքված մետաղապլաստիկ կորպուսում, Ունակությունը 70 կամ 80 Աxժ, աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը -40-ից+45C, Մեկ մարտկոցի նոմինալ լարումը 1.25վ, : Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:	400 հատ
26	ալկալիական մարտկոցներ (Մարտկոցներ)	Հիմնային մարտկոցներ 5ՆԿԼԲ-70Ա/80Ա, կամ համարժեք, 4 առանձին պոլիմերային կորպուսներով, յուրաքանչյուրում 5 հատ ՆԿ-70/80Ա հաջորդաբար միացված նիկելկադիումային մարտկոցներ, առանց	39 հատ

		էլեկտրոլիտի, հավաքված մետաղապլաստիկ կորպուսում, էլ. ունակությունը 70 կամ 80 ամպեր, աշխատանքային ջերմաստիճանը -40-ից+45C, Մեկ մարտկոցի նոմինալ լարումը 1.25վ, ընդհանուր լարումը 24Վ:: Արտադրման տարեթիվ 2017թ. և բարձր:	

Նշված երկու գնման առարկաները գրեթե նույնն են, միակ տարբերությամբ, որ 26-րդ չափաբաժնի դեպքում պահանջվել է ներկայացնել 4 առանձին պոլիմերային կորպուսներով մարտկոցներ:

Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չափաբաժնի մասով չի նշվել, որ մարտկոցները ունեն 4 առանձին պոլիմերային կորպուսներ:

Արձանագրելով անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները: Ընկերությունը կատարելով իր պարտականությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է շտկումները, որոնք սակայն Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով գնահատվել են ոչ բավարար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ուսումնասիրելով «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, վերջինիս դրսևորած վարքագիծը «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում, ինչպես նաև Պատվիրատուի դիրքորոշումը, գտնում եմ, որ Ընկերությունը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, քանի որ անհամապատասխանության արձանագրման պատճառ է հանդիսացել Ընկերության կողմից հրավերի տեխնիկական բնութագրի թյուրըմբռնումը, որի հետևանքով Ընկերության կողմից Ընթացակարգի 10-րդ և 26-րդ չափաբաժինները ընկալվել են որպես նույնական: Միևնույն ժամանակ Ընկերությունը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո մեկ աշխատանքային օրյա ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացրել է նշված անհամապատասխանությունների շտկումները, դրանով իսկ կատարելով անհամապատասխանությունը շտկելու իր պարտականությունը:

Այսպիսով՝ հաշվի առնելով «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում դրսևորած վարքագիծը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 10-րդ և 26-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի նմանատիպ լինելու և Ընկերության կողմից դրանք որպես նույնական ընկալվելու հանգամանքը, գտնում եմ, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2018թ. թիվ 03/26-3/7134-18 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00112776) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ